

ԱԶԱՏ  
ՎՆՏՈՒՆԻ




ՍՏԱԼԻՆԻ  
ԳՈՐԳԱՆԿԱՐԸ

891.99Ժ

Կ-75

ՊԵՏՅՐԱՏ

2011-071



891.995  
4-75  
hr

ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ


# ՍՏԱԼԻՆԻ ԳՈՐԳԱՆԿԱՐԸ

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1989




12 SEP 2014

13/90





4903  
39

АЗАТ ВШТУНИ  
ПОРТРЕТ ТОВАРИЩА СТАЛИНА НА КОВРЕ  
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.




Ջոկեցի բրդի կույտերից և ընտիր հյուսվեր հանեցի,  
Լվացի, հովին չորացավ, գըզեցի փափուկ, մանեցի՝  
Կազմեցի մանած բեկերիցն սպիտակ, սիրուն գիսակներ,  
Ջոկեցի գիսակ առ գիսակ բանկագին, ազնիվ տեսակներ:  
Կաթսայի առաջ յեռացող՝ զըրբնգուն ձայնով յերգեցի,  
Սպիտակ, մաքուր գիսակներ գույներով անմար ներկեցի:  
Ներկերով դեռ քաց գիսակներն առավոտ կանուխ փամեցի,  
Յերբ արևն յեղավ՝ մեկ առ մեկ արևի տեսփն հանեցի:  
Զորացան բեկերն արևով, ժողվեցի գիսակ առ գիսակ,  
Ու նստած նորից ջոկեցի գույների ամեն մի տեսակ:








Քերգյախի վրա քաշեցի պինդ քելերն ու ձիգ լարեցի,  
 Ծիծաղկոտ, խոստուն գիսակներ շարեշար կողքիս շարեցի:  
 Քերգյախի առջևն յես նստած՝ պարեցին մատներըս բարակ,  
 Գործեցի, խալի գործեցի յեռանդով, խիւղով և արագ:  
 Զգեցի քելեր սող առ սող, մկրատով վողորկ խուզեցի,  
 Մի Մարդու անմահ պատկերով իմ խալին հյուսել ուզեցի:  
 Թելերով լաջվարդ ու նարինջ, վոսկեվառ, կանաչ, յերկնաշող,  
 Իմ յերկրի նման ծիծաղկոտ, գույներով անջինջ ու նախշով,  
 Քերգյախի վըրա գործեցի, գործեցի յես խառ մի խալի,  
 Խաղողի մութեր չորս բոլոր՝ հաչաբաշ, մուսկատ, մըսխալի,





Տերևներ կանաչ քփերի, ծաղիկներն յերկրիս ձորերի,  
 Խնդուքյան գույները շողուն՝ ունևոր, բարախ որերի:  
 Կարոտով, յերգով գործեցի, ձրգեցի քելեր քելերին,  
 Շատ որեր անցան, բայց չեկավ հոգնություն իմ պիրկ քներին:  
 Ու յեկան անցան ամիսներ, յերբ տարին շրջան բոլորեց,  
 Նայեցի բացված իմ խալուն, խնդությունն իմ սիրտն որորեց:  
 Իմ խալին ահա լըրացած, գույներով փարթամ ու խոստուն,  
 Իմ յերկրի ձևերն ու հույզերն արևի հունով են հոսում:  
 Յեվ ահա արև շողարձակ՝ խառ խալու վրա, հմայուն,  
 ՍՏԱԼԻՆ—իմ հայրն է ծպտուն աչքերով և ինձ է նայում:






Քերգյահից խալին հանեցի, հրավանճով, յերգով ու սիրով,  
Արեշող սրտիս պուրակում խնդուքյան խոսքեր հյուսելով:  
Վառեցի լույսերը մեր տան, խառ խալին պատին զարկեցի,  
Ու յեկան ընկեր-հարևան, խելամաղ խնջույ՜ք սարքեցի:  
Արտաբաց նայում եմք Նրան, ու պատից Նա մեզ է նայում,  
Նա նայում է ջերմ յերեսիս, ժպիտով հոգիս հմայում:  
Յե՛վ կարծես ինձ հետ մտերիմ հայրական զրույց է անում:  
Լսեցի, կարծես քե՛ս ահա շրջընջաց մեղմիկ իմ անուն:  
Ու նստած գիշեր մինչև լույս՝ սպիտակ քղթիկ ձեռքիս տակ  
Շարեցի քղթի յերեսին վառ խոսքեր հույզով ու հստակ:




Ու նստած իմ հորն՝ անուշիկ հուզմունքով նամակ գրեցի.  
Ամեն մի խոսքի արանումն իմ սրտից մի մաս դրեցի.  
— Իմ ազի՛զ, իմ հա՛յր, իմ արև՛, հարազա՛տ, անուշ Ստալի՛ն,  
Ընդունիր նըվերըս համեստ՝ ի՛մ ձեռքով գործած այս խալին:  
Յես՝ ուրախ աղջիկն իմ յերկրի՝ խալիչա գործել եմ ուսել,  
Իմ յերկրի վառման գույներով, արևով, նախշով եմ հյուսել:  
Աղջիկներն ուրախ իմ յերկրի (նըբանց հետ և յես միասին)  
«Բեզ մատաղ լինենք, ազի՛զ հա՛յր»—նամակում գրիր ինձ ասին:  
Ծալեցի խալին խնամքով, սեղմեցի կրծքիս ջերմախանդ,  
Պահ տվի խալու ծալքերին իմ քղթիկը սուրբ մի ավանդ:




1025

Պատ. խմբագիր՝ Սերառ  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան



Ճամբեցի գործած իմ խալին ու նամակըս հորն իմ անգին,  
Նրա՛ն, վոր անշեջ լույս վառեց իմ խավար յերկրին, իմ կյանքին:  
Խառ խալին չճնաղ նախշերով, գույներով հավերժ և գերող,  
Ու հյուսված ազատ աղջկա հույզերով, յերգով, ձեռներով—  
Ճանապարհ անցավ ու գնա՛ց և գտավ նրան՝ Մեծ Մարդուն,  
Ու հեղվից տեսնում եմ, վորնա ժպտագին նամակս է կարդում:



<< Ազգային գրադարան



NL0405529

Գրավիտի լրագոր Վ—2183 հրատ 5045,  
Պատվեր 700, Տիրաժ 4000

Հանձնված է արտադրության 17 ոգոստոսի 1939 թ.  
Ստորագրված է տպագրության 19 սեպտեմբերի 1939 թ

Պետհրատի առաջին տպարան, Յերևան, Լենինի 65

9660 80 4.

13190